ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ՈՉ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

(1918 թ. դեկտեմբեր-1919 թ. առաջին ամիսներ)

ՊԵՏՐՈՍՅԱՆ Գ. Հ.

Առաջին աշխարհամարտից հետո աշխարհում ստեղծվեց նոր քաղաքական իրադրություն: Հաղթող պետությունների՝ Փարիզի վեհաժողովի որոշումների հիման վրա ձևավորվեց միջազգային հարաբերությունների նոր՝ վերսալ-վաշինգտոնյան համակարգը, որտեղ յուրաքանչյուր պետություն ձգտում էր որոշել իր կայուն տեղը և ապահովել սեփական արտաքին քաղաքական շահերը:

1918 թ. դեկտեմբերի 3-ին Հայաստանի խորհրդի և կառավարության մի քանի փակ նիստերում քննարկվեց Փարիզում հրավիրվող վեհաժողովին Հայաստանի Հանրապետության պատվիրակության մասնակցության անհրա- ժեշտության և նրա իրավասությունների հարցը[1]: Դեկտեմբերի 5-ին նախարարների խորհուրդը հաստատեց Հայաստանի պատվիրակության կազմը՝ Ա. Ահարոնյանի նախա-գահությամբ (անդամներ՝ Հ. Օհանջանյան և Մ. Պապաջանով)[2], իսկ դեկտեմբերի 7-ին վարչապետ Հովհ. Քաջազնունին հաստատեց Փարիզ ուղարկվող պատվի-րակության գործունեության հիմնական դրույթները[3], որով հրահանգվում էր վեհաժողովին ներկայացնել ու պաշտպանել «Միացյալ և անկախ Հայաստանի» գաղափարը: Թե՛ Հայաստանի և թե՛ Սփյուռքի քաղաքական գործիչներից շատերն առաջ էին քաշում Մեծ Հայաստանի ստեղծման գաղափարը: Սակայն Հ. Քաջազնունին գտնում էր, որ այդ գաղափարն «անիրականալի ու անգամ վնասակար է մեր ապագայի տեսակետից: Եթե մենք ընդունենք Մեծ Հայաստանի սահմանները, այն ժամանակ մեր երկրի բնակչությունը ամբողջովին պիտի դառնա սահմանապահ զորք՝ պաշտպանելու համար պետության սահմանները»[4]: Նա գտնում էր, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Փարիզի վեհաժողովում պետք է «...դնի Ռուսահայաստան և Թուրքահայաստանից՝ Բայազետ, Ալաշկերտ, Բասեն տարածքները ելք դեպի Սև ծով»[5] հարցը:

---

[1] Տե՛ս Զանգ, 15 XII, 1918:

[2] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. Պ-200, ց. 1, գ. 105, թ. 80, ֆ. Պ-206, ց. 1, գ. 2, թ. 109, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն) փաստաթղթեր և նյութերի ժողովածու, Ե., 2000, էջ 75, **Hovannisian R.** *The Republic of Armenia, vol.1, Berkeley, Los Angeles, London, 1971, p. 251,* **Հ ակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920թթ.), Ե., 1988, էջ 19:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 193, թ. 11-12:

[4] Հայրենիք, Բոստոն, 1952, № 7, հուլիս, էջ 3:

[5] **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, Դէմքեր Դէպքեր Ապրումներ, հ. Ե, Բէյրութ, 1966, էջ 44:

Հարցի քննարկումն ընթացավ տարաձայնությունների պայմաններում: Դրանք այնքան սուր էին, որ քիչ էր մնում տեղի ունենար «չափազանց ամուր դաշնակցություն կուսակցության պառակտում»[6]: Գնդապետ Մ. Զինկևիչը 1918 թ. դեկտեմբերի 29-ին Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի ռազմածովային բաժնի պետին ուղղված գաղտնի զեկուցագրով տեղեկացնում էր, որ թուրքական վտանգի վերացման և տարածաշրջանում Անգլիայի ազդեցության տարածման պատճառով տեղի է ունեցել քաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխություն, որի հետևանքով փոխվել են նաև Հայաստանի ղեկավարների տրամադրությունները: Տարբեր կուսակցությունների բազմազան դիրքորոշումների կայացման մեջ, ըստ նրա, դեր են խաղացել հետևյալ հանգամանքները. «1. Ազգայնականների երազանքները Հայաստանի անկախության, ֆեդերացիայի, կոնֆեդերացիայի կամ ինքնավարության մասին: 2. Թուրքահայաստանի միավորման հնարավորությունը Ռուսահայաստանին Սև կամ Միջերկրական ծովեր ելք ունենալով: 3. Ռուսաստանի և նրա մոտալուտ վերականգնման նկատմամբ հավատի կորուստը և, որ նրանց հատկապես վախեցնում է, հին կարգերի վերականգնման հնարավորությունը, որի դեպքում կկրկնվեն 1914-1915 թթ. բռնությունները: 4. Կովկասում անգլիացիների և ֆրանսիացիների բոլորովին չհստակեցված վարքագիծը, որի հետևում հայերը տեսնում են Ռուսաստանի հետ նրանց հաշվի չնստելու հնարավորությունը:

Այս բոլոր գործոնները քաղաքական գործիչների շրջանում բուռն քննարկումների առարկա են դարձել և ընկել կուսակցությունների ու կառավարության որոշումների հիմքում»[7]: Առավել վիճահարույց էր նոր պայմաններում Ռուսաստանի նկատմամբ ցուցաբերվելիք վերաբերմունքը: Ինչպես նշում է Մ. Զինկևիչը, «ժողովրդի, հատկապես հասարակ մարդկանց մեջ Ռուսաստանի և ռուսական ամեն ինչի նկատմամբ ձգտումը պահպանվել է նախկին ուժով»[8]: Սակայն այդպես չէր քաղաքական ու կառավարական շրջաններում, այստեղ տվյալ հարցում դրսևորվում էին տարբեր, հաճախ իրարամերժ մոտեցումներ: Այդ մասին գեներալ Ա. Դենիկինը իր հուշերում գրում է. «...չնկատվեց նախկին համերաշխությունը»[9] Ռուսաստանի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի խնդրում[*], այն դեպքում, երբ «թուրք-գերմանական հարձակման ընթացքում

---

[6] *Государственный архив Российской федерации (այսուհետև՝ ГАРФ), ф. 446, оп. 1, д. 9, л. 37, ՀԱԱ, ֆ.Պ-277, ց. 1,* գ. 5, թ. 32:

[7] Նույն տեղում, ց. 1, գ. 9, թ. 36, ՀԱԱ, ֆ. Պ-277, ց. 1, գ. 5, թ. 31:

[8] Նույն տեղում:

[9] *Вопросы истории, 1994, № 2, с.103,* ***Деникин А.****, Очерки русской смуты: в 3 книгах, книга 3/т. 4, т. 5. Вооруженные силы Юга России, М., 2003, с. 248.*

[*] Գնդապետ Լեսլին 1918 թ. դեկտեմբերին «Հատուկ խորհրդակցությանը» ուղղված գաղտնի զեկուցագրով տեղեկացնում է, որ Հայաստանի խորհրդում իշխող կուսակցությունը դաշնակցությունն է: Այն բաժանված է երկու թևի՝ հին դաշնակցականների, որը չափավոր է և ընդունում է Ռուսաստանի հետ համագործակցելու անհրաժեշտությունը: Երկրորդը երիտասարդ նոր դաշնակցականներն են, որոնք առավել «...ծայրահեղական են և համապատասխանում են մեր

Հայաստանի կառավարող շրջանակներում ռուսական կողմնորոշումը համընդհանուր էր: Այն պահպանվել էր նաև անգլիական բռնազավթման առաջին շրջանում»[10]: Գեներալը այնուհետև շարունակում է. «Կառավարող դաշնակցություն կուսակցության ձայները բաժանվեցին: Մի մասը պաշտպանում էր Ռուսաստանի կազմում Հայաստանի երկու մասերի ինքնավարության կամ նրա հետ համադաշնության գաղափարը»[11]: Դաշնակցություն կուսակցության՝ ռուսական դիրքորոշում ունեցող այդ թևը միաժամանակ «զգուշանում է,- գրում է Մ. Զինկևիչը,- Ռուսաստանում միապետության վերականգնումից և, հատկապես, դրա սահմանադրական տարբերակից, կարծելով, որ այդ դեպքում կաճի «ռուսական ազգայնամոլությունը»[12]: «Մյուս մասը,- գրում է Ա. Դենիկինը,- պահանջում էր «Միացյալ և անկախ Հայաստան» Կիլիկիայի հետ միասին, ելք ունենալով դեպի Սև և Միջերկրական ծովեր: Հայկական «ժողովրդական կուսակցությունը» (լիբերալներ) արտահայտվեց Ռուսաստանին միանալու օգտին: Նրան միացան սոցիալիստ-հեղափոխականները, իսկ վրացիների հետ սերտ կապեր ունեցող սոցիալ-դեմոկրատները պաշտպանում էին Ռուսաստանից անջատվելու գաղափարն անկախ երկրի հետագա ճակատագրից[13]:

Հիրավի, Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքի հարցում Հայաստանի քաղաքական շրջաններում կային իրարամերժ մոտեցումներ: Իրականում ո՞րն էր Հայաստանի Հանրապետության ու նրա ղեկավարության վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ: Ունենալով մեծ ակնկալիքներ Փարիզի վեհաժողովից՝ Հայաստանի Հանրապետությունը կողմնորոշվեց դեպի Արևմուտք, սակայն չէր ցանկանում կապերը խզել Ռուսաստանի հետ, այլ ձգտում էր ստանալ նրա բարյացակամ վերաբերմունքն ու աջակցությունը՝ իր առջև կանգնած ծայրահեղ բարդ խնդիրները լուծելու գործում: Այդ առնչությամբ Ռ. Տեր-Մինասյանը գրում է. «Մեր նպատակն է ապահովել մեր անկախութիւնը եւ որոշ յենարան գտնել Ռուսիոյ մէջ»[14]: Այնուհետև նա նշում է. «ո՞ր Ռուսաստանի հետ խօսել եւ որի՞ բարեկամութիւնը ապահովել[15]»: Պատմական այդ պահին Հայաստանի Հանրապետությունը կողմնորոշվել էր դեպի Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումները, կոնկրետ՝ Ա. Դենիկինի իշ-խանությունը, և

բոլշևիկներին: Հին դաշնակցականներից կարելի է նշել Հ.Քաջազնունուն (վարչապետ), Դրոյին (ազգային հերոս, զորաջոկատի հրամանատար), Արամ փաշային (ներքին գործերի նախարար, ունի իրական իշխանություն): Երկրորդ թևից կարելի է նշել Թորոսյանին (նախկին նահանգային կոմիսար, ուսուցիչ)»: (*ГАРФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 27, 32, ՀԱԱ, ֆ. Պ-277, ց. 1, գ. 5, թ. 22, 27):*

[10] *Вопросы истории, 1994, № 2, с. 103,* **Деникин А.**, *Очерки русской смуты: в 3 книгах, книга 3/т. 4, т. 5. Вооруженные силы Юга России, с. 247.*

[11] **Деникин А.,** *նշվ. աշխ., էջ 248:*

[12] ՀԱԱ, ֆ. Պ-277, ց. 1, գ. 5, թ. 32, *ГАРФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 37:*

[13] *Вопросы истории, 1994, № 2, с.103,* **Деникин А.**, *նշվ. աշխ., էջ 248:*

[14] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Է, Թեհրան, 1982, էջ 262:

[15] Նույն տեղում, էջ 257:

փորձում էր ստանալ նրա աջակցությունը: Սակայն Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը», հավատարիմ իրենց «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագրին, Անդրկովկասը, այդ թվում նաև՝ Հայաստանը՝ որպես անկախ պետություն, դիտում էին իբրև ժամանակավոր երևույթ, մինչև խորհրդային իշխանության դեմ հաղթանակը: Այդ հանգամանքը Հայաստանի կառավարությանը ստիպում էր ծայրահեղ զգուշություն ցուցաբերել Կամավորական բանակի նկատմամբ: 1918 թ. դեկտեմբերի 14-ին գեներալ Ա. Դրագոմիրովին (Երևանից) ուղղած գաղտնի զեկուցագրով գնդապետ Լեսլին տեղեկացնում էր, որ Հայաստանի ղեկավարները «երազում են Հայաստանի ինքնուրույնության մասին և վախենում են մեզանից, որովհետև մենք սպառնում ենք նրանց անկախությանը: ...Մեզ այստեղ ուշադրությամբ հետևում են, և համարյա ի վիճակի չենք աշխատելու: Ռուսներին և Ռուսաստանին համակրողներ շատ կան, սակայն նրանք կազմակերպված չեն և վախենում են դաշնակցականներից, հատկապես Արամ փաշայից՝ ներքին գործերի նախարարից»[16]:

Բոլոր դեպքերում, Հայաստանի Հանրապետության ղեկավարները ձգտում էին պարզել, թե Ա. Դենիկինի իշխանությունն ինչպես է վերաբերվում Հայաստանի անկախությանը: Այդ նպատակով 1918 թ. դեկտեմբերի սկզբին Հայաստանի կառավարությունը Մ. Արզումանովին հանձնարարեց մեկնել Եկատերինոդար՝ պարզելու Ռուսաստանի հարավի ղեկավար շրջանների դիրքորոշումը Հայաստանի անկախության և Հայկական հարցի մասին: Դեկտեմբերի 16-ին Ա. Ահարոնյանի հանձնարարությամբ Մ. Արզումանովը Թիֆլիսում նույն խնդրի առթիվ հանդիպումներ ունեցավ Ա. Դենիկինի ներկայացուցիչների հետ: Դեկտեմբերի 19-ին Մ. Արզումանովի և Կամավորական բանակի անլեգալ ներկայացուցիչ գեներալ Տետրունի հանդիպման ժամանակ վերջինս հաղորդեց, որ «Ռուսաստանն ամեն գնով պետք է վերականգնվի 1914 թ. սահմաններում, բացի Լեհաստանից և Ֆինլանդիայից: ...Ինչ վերաբերում է հայերին, ապա ...նրանք ստանալու են լիիրավ ինքնավարություն Ռուսաստանի սահմաններում, իսկ թուրքահայերը կարող են անկախություն ստանալ...: Սակայն, եթե վերջինները ցանկանան, մենք կարող ենք նրանց միացնել Ռուսահայաստանի հետ, և միավորված Հայաստանը, որպես ինքնավար միավոր, կմտնի Ռուսաստանյան պետության կազմի մեջ»[17]: Նկատի ունենալով անկախության վերաբերյալ հայկական քաղաքական շրջանների վճռական դիրքը՝ թե՛ գեներալ Ա. Դենիկինը և թե՛ նրա ներկայացուցիչները հավաստիացնում էին, որ իրենց կամքը չեն պարտադրի: Գնդապետ Լեսլին պնդում էր, որ «Ռուսաստանի վերականգնումը չպետք է հասկանալ միայն այն մտքով, թե վերաշինվելու է նախկին շենքը իր առաջվա միությամբ և ամբողջությամբ: Հայաստանը կարող է չմտնել Ռուսիայի

---

[16] *ГАРФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 27, оп. 2, д. 39, л. 32, ՀԱԱ, ֆ.Պ-277, ց. 1, գ. 5, թ. 22:*

[17] ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 2, գ. 963, թ. 80-81:

մեջ, այլ կլինեն երկու առանձին պետություններ իրար բարեկամ, իրար աջակից»[18]: Բնավ չի կարելի պնդել, որ Կամավորական բանակի ու նրան կից «Հատուկ խորհրդակցության» ղեկավարները երբևէ դրսևորեցին կամք ու ցանկություն՝ ապահովելու Հայաստանի հետագա անկախությունը: Ահա թե ինչու Ռուսաստանի հարավի հետ իր հարաբերություններում Հայաստանի կառավարությունը դրսևորեց խիստ զգուշավորություն: Չունենալով գաղափարների ընդհանրություն Ռուսաստանի հարավի և Սիբիրի (ծովակալ Ա. Կոլչակ) ոչ խորհրդային պետական կազմավորումների քաղաքական ծրագրերի հետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձգտում էր նրանց կողմից ճանաչվել իբրև անկախ պետություն, ապահովել երկու երկրների բարեկամական հարաբերությունները և օգտագործել նրանց հնարավորությունները՝ մի շարք հրատապ խնդիրների լուծման համար:

Ռուսաստանի հարավի հետ Հայաստանի Հանրապետության պաշտոնական կապերը շարունակվեցին մինչև բրիտանական զորամասերի՝ Անդրկովկասում հայտնվելու առաջին ամիսները: Քաղաքական նոր պայմաններում այդ կապերը նոր ընթացք ստացան: Եթե հանրապետության գոյության առաջին շրջանում դրանք կրում էին գաղտնի, կիսապաշտոնական, երբեմն սահմանափակ բնույթ, ապա Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հայաստանն ազատ էր տնօրինելու իր արտաքին քաղաքական կապերը: Սակայն այս անգամ էլ առաջ եկավ նոր լուրջ խոչընդոտ, որի հետևանքով Հայաստանի և Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հարաբերությունները դարձյալ կրեցին գաղտնի, կիսապաշտոնական, երբեմն էլ սահմանափակ բնույթ: Դա պայմանավորված էր Համաձայնության պետությունների՝ ի դեմս Մեծ Բրիտանիայի և նրա դաշնակից հակաբոլշևիկյան Ռուսաստանի միջև, Անդրկովկասում գոյություն ունեցող անհամաձայնություններով և նրանց վարած հակասություններով լի քաղաքականությամբ, որը Հայաստանի կառավարությանը դրեց բարդ և անգամ անելանելի վիճակի մեջ: Այդպիսի լարված ու խճճված քաղաքական իրադրության պայմաններում Ռուսաստանի հարավի հետ կապերը կարգավորելու համար Հայաստանի իշխանություններից պահանջվեցին ժամանակ, մեծ ջանքեր ու քաղաքական ճկունություն:

Բրիտանական օկուպացիոն զորամասերը 1918 թ. նոյեմբերի վերջերից մաս-մաս սկսեցին մուտք գործել տարածաշրջան՝ փոխարինելով հեռացող պարտված Թուրքիայի զորքերին: Մեծ Բրիտանիայի կառավարության 1918 թ. դեկտեմբերի 11-ի հրամանով անգլիական զորամասերը Կովկասում պետք է ապահովեին թուրքերի կողմից զինադադարի պայմանների կատարումը[19]:

Բրիտանական հրամանատարությունն Ա. Դենիկինին տեղեկացրեց Մեծ Բրիտանիայի կառավարության խնդիրների մասին՝ ա) ստիպել գերմանացիներին և թուրքերին՝ անհապաղ ազատելու հաշտության պայմանագրով Թուրքիային

---

[18] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), ՀՅԴ արխիվ, Բոստոն, № 4063, ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 24, ց. 2, գ. 65, թ. 2:

[19] Տե՛ս ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2001, № 2, էջ 63:

չպատկանող տարածքները, բ) պահպանել կարգ ու կանոն Անդրկովկասում[20]: Գեներալ Ջ. Ուոքերը 1919 թ. հունվարին Ա. Դենիկինի ներկայացուցիչ գեներալ Էրդելիին հայտնեց, որ անգլիական զինվորական առաքելության նպատակն է մինչև Փարիզի վեհաժողովի որոշման ընդունումն Անդրկովկասում ապահովել ու պահպանել կարգ ու կանոն և աջակցել Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի կառավարություններին՝ հետևելու տարածաշրջանում իրավիճակի կայունացմանը: Ջ. Ուոքերը ներկայացրեց Անդրկովկասի ճակատագրի տնօրինման երեք նախագիծ. «1. Ինքնավարության իրավունքով միացումը Ռուսաստանին 1914 թ. սահմաններով:

2. Ձևավորված պետությունների անկախության ճանաչում նրանց լրիվ անջատումով Ռուսաստանից:

3. Կովկասի Միացյալ Նահանգների ձևավորումը.

ա) որպես Ռուսաստանից անկախ ինքնուրույն կառուցվածք կամ

բ) Ռուսաստանի հետ ֆեդերացիայի մեջ՝ ինքնավարության իրավունքով»[21]: Այսպիսով, քողարկվելով խաղաղարարի առաքելությամբ, Անգլիան թաքցնում էր իր իրական նպատակը՝ հաստատվել Անդրկովկասում:

Դեռ մեկ տարի առաջ՝ 1917 թ. դեկտեմբերի 23-ին, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի միջև կնքված գաղտնի պայմանագրի համաձայն, Ռուսաստանի հարավը բաժանվել էր ազդեցության ոլորտների: Մեծ Բրիտանիայի ազդեցության ոլորտի մեջ էին մտնում Հյուսիսային Կովկասը, Անդրկովկասը, Թուրքեստանը: Ֆրանսիայի վերահսկողության ոլորտի մեջ էին մտնում Բեսարաբիան, Ուկրաինան, Ղրիմը և Դոնբասը[22]: Անդրկովկասում հաստատվելու համար Մեծ Բրիտանիան, բնականաբար, պետք է հաղթահարեր տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը և հասներ այն բանին, որ Անդրկովկասն այլևս չմտներ նրա կազմի մեջ: Եվ պատահական չէր Ջ. Ուոքերի՝ «անգլիացիները չեն կարող թույլ տալ Ռուսաստանի հետ Անդրկովկասի վերամիավորվելուն ուղղված որևէ քարոզչություն»[23] հայտարարությունը: Դա անգլիական գեներալը պատճառաբանեց նրանով, թե իբր «խաղաղության վեհաժողովը դեռևս Անդրկովկասի պետական կառուցվածքի հարցի լուծումը չի տվել»[24]: Այս ամենը լույս է սփռում այն իրողության վրա, թե ինչու էր բրիտանական հրամանատարությունն ամեն կերպ խոչընդոտում Հայաստանի Հանրապետության

---

[20] *Революция и гражданская война в описаниях белогвардейцев, с. 90. տե՛ս Вопросы истории, 1994,* № *1, с. 126,* **Деникин А.**, *նշվ. աշխ., էջ 202:*

[21] *Революция и гражданская война в описаниях белогвардейцев, с. 90. տե՛ս Вопросы истории, 1994, № 1, с. 126,* ***Деникин А.***, *նշվ. աշխ., էջ 204:*

[22] *Տե՛ս Российский государственный архив социально-политической истории (այսուհետև՝ РГ АСПИ), ф. 71, оп. 35, д. 195, л. 151,* ***Գալոյան Գ.***, *Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, էջ 20:* **Махмурян Г. Г.**, *Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920гг. Бремя белого человека, Е., 2002, с. 40.*

[23] *Революция и гражданская война в описаниях белогвардейцев, с. 90. տե՛ս Вопросы истории, 1994,* № *1, с. 126,* **Деникин А.,** *նշվ. աշխ., 204:*

[24] Նույն տեղում:

կապերին Ա. Դենիկինի Կամավորական բանակի հետ, որը ձգտում էր վերականգնել ռուսական միասնական պետությունը՝ 1914 թվականի սահմաններով, ներառյալ՝ Անդրկովկասը: Առաջին հայացքից թվում է անհաս-կանալի, թե այդ դեպքում ինչու էին Համաձայնության խմբավորման երկրները և առաջին հերթին Մեծ Բրիտանիան ստանձնել պարտավորություն՝ ամեն կերպ օգնելու Ա. Դենիկինին: Դա արվում էր ոչ թե նրա համար, որ վերջինիս հաղթանակով վերականգնվի ռուսական կայսրությունն իր նախկին սահմաններով, այլ այն բանի, որ Ա.Դենիկինը տապալի խորհրդային իշխանությունը: Մեծ Բրիտանիան Անդրկովկասում իր խորամանկ քաղաքականությունը վարում էր այնպես, որ շփոթության մեջ էր գցում անգամ Ա. Դենիկինին: Սակայն ուշագրավն այն էր, որ Համաձայնության խմբավորման երկրները պարտավորություն էին ստանձնել՝ անվերապահորեն օգնելու նրան: Հայերին թվում էր, թե «դաշնակից» Մեծ Բրիտանիայի զինվորների ներկայությունն Անդրրկովկասում կապահովի կայուն խաղաղություն, ազգամիջյան հակամարտությունների և տարածքային վեճերի արդարացի լուծում: Նրանք համոզված էին, որ Առաջին աշխարհամարտում թափված արյունը զուր չի կորչելու. մոտեցել է հատուցման երկար սպասված ժամը, երբ Համաձայնության պետությունների կառավարությունները կկենսագործեն իրենց խոստումները: Բրիտանական զորամասերի մուտքը տարածաշրջան (մինչև 1919 թ. առաջին ամիսները) ոգևորություն և մեծ հույսերի պատրանք ստեղծեց անգամ Հայաստանի առանձին ղեկավարների ու քաղաքական գործիչների շրջանում: Ա. Ջամալյանը 1918 թ. նոյեմբերի 26-ին Թիֆլիսից շտապեց հեռագրել Հայաստանի արտաքին գործերի նախարարին, թե«Համաձայնության երկրների զորամասերը ժամանել են Բաթումի, անհրաժեշտ է շտապ ուղարկել ներկայացուցիչներ՝ մի շարք խնդիրների, մասնավորապես գաղթականության հարցը կարգավորելու համար»[25]: Սակայն նույն Ա. Ջամալյանը նոյեմբերի 15-ին Ս. Տիգրանյանին ուղարկված գաղտնի գրությամբ հայտնել է իր հիասթափությունը. «Տպաւորութիւնն այն է, որ անգլիացիք այս անգամ էլ մեզ հետ վատ խաղ պիտի խաղան: Այս տպաւորութիւնները հաստատւում են այն տեղեկութիւններով, որ ստացւում են Պարսկաստանից: Վերաբերմունքը դէպի մեզ այնտեղի անգլիացիների կողմից շատ վատ է»[26]: Սակայն այս զգուշացումը չսթափեցրեց հայ պետական այն գործիչներին, որոնք քաջալերված էին անգլիական զորքերի առկայությամբ:

Ս. Տիգրանյանը 1919 թ. հունվարի 13-ի գաղտնի գրությամբ Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին տեղեկացնում է հետևյալը. «Անգլիան հավան ու հովանի է և խրախուսում է Անդրկովկասյան անկախ պետությունների գործերը. Գեներալը (Ջ. Ֆորեստյեր-Ուոքերը- Գ. Պ.) մինչև անգամ հետաքրքրվեց իմանալ, արդյոք ճիշտ է, որ Հայաստանի կառավարությունը համաձայնության է եկել գեն. Ա. Դենիկինի հետ

[25] ՀԱԱ, ֆ.Պ-200, ց. 1, գ. 66, թ. 118:
[26] Նույն տեղում, թ. 114:

(«Կամավորական զորաբանակ»): Ես իհարկե հանգստացրի անգլիացի գեներալին, որ թեև մենք լավագույն հարաբերություններն ունենք Կամավորական զորաբանակի հետ, բայց ոչ մի համաձայնություն չունենք նրա հետ»[27]: Հայաստանի նկատմամբ բրիտանական հրամանատարության «ջերմ» վերաբերմունքի մասին հուսադրող և լավատեսական լուրեր էին ստացվում Թիֆլիսից, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և զինվորական ներկայացուցիչներից: 1919 թ. հունվարի 22-ին Ս. Տիգրանյանին ուղղված զեկույց-նամակում Վրաստանում Հայաստանի դիվանագիտական առաքելության զինվորական կցորդ, գեներալ Մ. Արեշյանը տեղեկացնում է. «Բաթումում հայերի նկատմամբ անգլիական հրամանատարության սպաների և զինվորների վերաբերմունքը չափազանց ջերմ է: Բոլոր պաշտոնական հանդիպումներում անգլիական հրամանատարները հայտարարել են, որ ճանաչում են մեր ժողովրդին, նրան համարում են իրենց դաշնակիցը և հայերի համար կանեն իրենցից կախված ամեն ինչ»[28]: Անգամ Հ. Քաջազնունին Հայաստանի խորհրդի՝ 1919 թ. փետրվարի 11-ի նիստում հայտարարեց. «Գեներալ Ուոքերը նշանակել է իբրև իր ներկայացուցիչ Երևանում մի բարձրաստիճան սպա՝ գեներալ Ասսերը: Դա մի նոր ապացույց է բրիտանական բանակի ուշադիր և բարյացակամ վերաբերմունքի՝ դեպի մեզ»[29]: Կամավորական բանակի հետախուզական վարչությունն իր հերթին նույն թվականի հունվարի կեսերին Ա. Դենիկինին շտապել էր հաղորդել, որ «անգլիացիների և Հայաստանի միջև հաստատվել են ամենալավ հարաբերությունները»[30]: Սակայն այդ ամենը ընդամենը խաբկանք էր. «Ենգ էին ու սուտ,- գրում է Գ. Չալխուշյանը,- մեր մեծ դաշնակիցների շողոքորթ հավաստիացումները, թե մենք փոքր դաշնակիցներ ենք «non petits allies»: Ամեն ինչ սուտ էր, սուտ: Ամեն ինչ նենգ, պատրանք»[31]: 1918 թ. դեկտեմբերը և 1919 թ. առաջին ամիսները Հայաստանի պետական ու քաղաքական գործիչներին համոզեցին, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունն Անդրկովկասում հետապնդում է «միայն սեփական շահերը»[32],- գրում է Է. Զոհրաբյանը: Նա չէր ընդունում Կամավորական բանակի առաջխաղացումն իր ազդեցության ոլորտի տարածքներում և առիթ բաց չէր թողնում «ընդգծելու իրենց հակակրութիւնը միացեալ Ռուսաստանի գաղափարին»[33]:

Այդ մասին նշում է նաև Մ. Զինկևիչը 1919 թ. հունվարի 23-ին Կամավորական բանակի ռազմածովային նավատորմի բաժնի պետին Երևանից ուղարկած գաղտնի

---

[27] ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, № 4063, ՀԱԱ, ֆ.Պ-200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 23, ց. 2, գ. 65, թ. 1:

[28] ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց. 2, գ. 963, թ. 89, գ. 993, թ. 2, ֆ. Պ-200, ց. 1, գ. 158, թ. 76-77:

[29] ՀԱԱ, ֆ. Պ-198, ց.1, գ.15, թ.121:

[30] *РГ ВА, ф. 39540, оп. 1, д. 15, Г. 121.*

[31] ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց. 6, գ. 293, թ. 16:

[32] **Զոհրաբյան Է.**, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր - 1920 թ. ապրիլ), Ե., 2002, էջ 70:

[33] ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 181, մաս I, թ. 35:

զեկուցագրում. «Անգլիացիները,- գրում է նա,- Կովկասում վարում են իրենց ինքնուրույն քաղաքականությունը և բոլորովին չեն հիշատակում Ռուսաստանը և Կովկասը՝ նրան պատկանելու մասին: ...Անգլիան ձգտում է Կովկասը անջատել Ռուսաստանից: Այդ հանգամանքը խթանում է հակառուսական շրջանակների գործունեությունը»[34]: Ա. Մալխազովը 1919 թ. փետրվարի 7-ին գաղտնի զեկույցում տեղեկացնում էր, որ «անգլիացիները ոչ միայն չեն թաքցնում, այլև հաճախ շեշտում են իրենց հետաքրքրությունը կովկասյան գործերում և ամեն կերպ խոչընդոտում են այստեղ ռուսական ազդեցության ամրապնդումը»[35]:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտից անմիջապես հետո Անդրկովկասում սուր կերպով բախվեցին Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի շահերը: Մեծ Բրիտանիան ձգտում էր տարածաշրջանից դուրս մղել Ռուսաստանին և ամրապնդել իր դիրքերը: Այդ պահին Ռուսաստանի հարավի շահերն արտահայտում էր Ա. Դենիկինի Կամավորական բանակը, որի հետ լավ հարաբերությունների մեջ էր Հայաստանի Հանրապետությունը: Եվ պատահական չէր, որ Մեծ Բրիտանիան չէր հանդուրժում Հայաստանի բարեկամական կապերը Ռուսաստանի հարավի հետ և նրան համարում էր անուղղելի ռուսասեր՝ «անվստահելի մի տարր Անդրկովկասում»[36]: Իր ռազմավարական նպատակն իրագործելիս Մեծ Բրիտանիան, բնականաբար, պետք է հենվեր տարածաշրջանի ժողովուրդների աջակցության ու համակրանքի վրա: Հայերը նրան վստահություն չէին ներշնչում՝ ավանդական ռուսական կողմնորոշման պատճառով: Բրիտանական զինվորական առաքելությունը Անդրկովկասի մահմեդական բնակչությանը դիտում էր ավելի հավատարիմ, ավելի վստահելի հակառուսական տարր[37]: Առաջին աշխարհամարտի նախօրյակին Անգլիայի համայնքների պալատի անդամ Բեքստոնը Հովի. Թումանյանի հետ զրույցի ժամանակ նշել է. «Դուք պետք է Ռուսաստանի հետ լինեք: Երբեք մի հավատացեք, որ Անգլիան կարող է լինել ձեր պաշտպանը»[38]:

Անգլիական զինվորական առաքելությունն օգտագործում էր բոլոր միջոցները՝ պայքարելու հայերի ռուսամետության դեմ: Այդ մասին Ա. Դենիկինը գրում է. «Անգլիական ներկայացուցիչները՝ Ուոքերը, Բիչը և մյուսները, պայքարում էին հայերի ռուսամետության դեմ, ճնշելով և վախեցնելով նրանց, իսկ մյուս կողմից գայթակղեցնելով Ռուսահայաստանի և Թուրքահայաստանի հատվածները Սև ծով ելք ունեցող ինքնուրույն պետության ստեղծման հեռանկարով[39]: Ինչպես նկատում ենք, հայերի ռուսամետության դեմ պայքարելիս

---

[34] *ГА РФ, ф. 446, оп.1, д. 9, л. 44,* ՀԱԱ, ֆ.Պ-277, ց. 1, գ. 5, թ. 39.

[35] ՀԱԱ, ֆ. Պ-223, ց. 1, գ. 75, թ. 20:

[36] **Բաբալեան Ա.**, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ 32:

[37] ՀԱԱ, ֆ.Պ-200, ց. 2, գ. 43, թ. 2-3, **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, Ե., 1993, էջ 259:

[38] ՀԱԱ, ֆ. Պ-223, ց. 1, գ. 76, թ. 27:

[39] *Вопросы истории, 1994,* № *2, с. 103,* ***Деникин А.****, նշվ. աշխ., էջ 27:*

անգլիացիները տալիս էին նաև գայթակղիչ խոստումներ: Նման պայմաններում հայ քաղաքական-պետական գործիչների համար չափազանց դժվար էր ճիշտ կողմնորոշվել ստեղծված բարդ քաղաքական կացության պայմաններում:

Հայաստանի կառավարությունը շարունակում էր Ռուսաստանի հարավին համարել Համաձայնության պետությունների դաշնակիցը և չկարողացավ ժամանակին ու ճիշտ գնահատել պատերազմի ավարտից հետո Մեծ Բրիտանիայի հակառուսական օկուպացիոն ձգտումներն Անդրկովկասում: Ստեղծված բարդ քաղաքական իրադրությունը Հայաստանի Հանրապետության ղեկավարությունից պահանջում էր աչալուրջ հետևել դեպքերի ընթացքին և խոստումների խորքում տեսնել այն ծուղակը, որ պատրաստվում էր նրա համար: Գեներալ Գ. Կորգանովը 1919 թ. հունվարի 20-ին Թիֆլիսից Ս. Տիգրանյանին ուղղված գաղտնի զեկուցագրում գրում էր. «Մեր արտաքին քաղաքականությունը պետք է լինի չափազանց զգուշավոր: Մենք չենք կարող և չպետք է վարենք բացառապես անգլամետ կամ ռուսամետ քաղաքականություն»[40]:

Փարիզի վեհաժողովը բացվեց 1919 թ. հունվարի 18-ին: 1919 թ. փետրվարի 4-ին Հայաստանի պատվիրակությունը ժամանեց Փարիզ, որտեղ արդեն գտնվում էր ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: Սկզբից նեթ բացառվեց երկու պատվիրակություններից հայության միասնական կամքն արտահայտող միացյալ պատվիրակության ստեղծումը, քանի որ առանցքային մի շարք հարցերում լուրջ տարաձայնություններ առաջացան: Ի վերջո, 1919 թ. փետրվարի 25-ին վեհաժողովին ներկայացվեցին հայության միասնական պահանջները՝ ճանաչել հայկական պետությունը՝ Կովկասյան Հայաստանը, Արևմտյան Հայաստանի յոթ վիլայեթները և Կիլիկիայի չորս սանջակները ներառող սահմաններով: Առաջարկվում էր Հայաստանը դնել դաշնակիցների հոգա-տարության ներքո և առնվազն քսան տարով պետություններից մեկին հանձնել նրա մանդատը: Իր նպատակները ներկայացնելով Փարիզի վեհաժողովին՝ հայությունը մեծ հույսերով սպասում էր նրա վճռին, որը շատ էր ուշանում: Բացի այդ, անգլիական զորքերի առկայությամբ Անդրկովկասում ստեղծված բարդ ու հակասական իրադրության պայմաններում Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը պետք է կարողանար ճիշտ քաղաքականություն վարել: Եվ թվում էր, թե Փարիզի վեհաժողովում եղանակ ստեղծող Անգլիան, համաձայն իր խոստումների, բարյացակամ վերաբերմունք կդրսևորի Հայաստանի ու հայության նկատմամբ: Մինչդեռ դա չէր զգացվում, և Հայաստանի ղեկավարությունը շփոթված էր Անգլիայի գործնական քայլերից, որոնց նպատակն էր հաղթահարել հայերի ռուսամետությունը և խափանել Հայաստանի Հանրապետության կապերը Ռուսաստանի հարավի հետ:

Ա. Մալխազովի՝ 1919 թ. փետրվարի 7-ի գաղտնի զեկույցում նշվում է, որ Հայաստանում «իշխում է շվարածություն՝ անգլիացիների քաղաքականության կապակցությամբ»[41]: Մ. Զինկևիչը ևս նույն թվականի հունվարին Կամավորական

[40] ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 35-36:
[41] ՀԱԱ, ֆ. Պ-223, ց. 1, գ. 75, , թ. 20:

բանակի շտաբին տեղեկացրել է, որ «Հայերի մոտ արդեն զգացվում է հիասթափություն անգլիացիների նկատմամբ»[42]: «Ռուսերը նույնպէս «իրապէս շփոթած» էին բրիտանացիներու դիրքորոշումէն,- գրում է Ա. Նասիպյանը,- եւ զանոնք կը դիտէին բացարձակ անվստահութեամբ»[43]: Շուտով ռուսներին էլ պարզ դարձավ, որ Անգլիան Անդրկովկասում հետապնդում է միայն իր սեփական շահերը: 1918 թ. դեկտեմբերի 6-ին Մեծ Բրիտանիայի կառավարությանը գեներալ Վ. Թոմսոնի ուղղած զեկուցագրից հայտնի է դառնում, որ անգլիական օկուպացիոն զորքերի առջև խնդիր էր դրված «վերահսկողություն սահմանել երկրամասի ամբողջ տնտեսական և քաղաքական կյանքի վրա»[44]: Հայտնի է, որ Կամավորական բանակը նույնպես չկարողացավ ժամանակին և ճիշտ գնահատել Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունը: Հաճախ նրանք բրիտանական զինվորական հրամանատարությանը դիմում էին այնպիսի պահանջներով, որոնք «ամբողջովին հակասում էին նրանց տրված հրահանգներին,- գրում է գեներալ Ա. Լուկոմսկին: -Դրանց կատարումն անխուսափելիորեն կհանգեցներ հանրապետությունների (Անդրկովկասյան - Գ. Պ.) հետ պատերազմի»[45]: Հենց առաջին օրերից Համաձայնության երկրների ռուսական քաղաքականությունը «երկակի, անորոշ բնույթ ընդունեց,- գրում է Ա. Դենիկինը,- և ինձ դրդեց դիմել առանձնակի զգուշության»[46]: Կամավորական բանակի ձգտումը՝ վերականգնել ռուսական կայսրությունը իր նախկին բոլոր սահմաններով, հակասում էր Անգլիայի շահերին, որն էլ աշխատում էր Անդրկովկասն ազատել ռուսական ազդեցությունից: Դրա համար էլ անգլիական զորահրամանատարությունը դեմ էր Կամավորական բանակի հետ Հայաստանի Հանրապետության կապերին և ձգտում էր խզել դրանք:

Հայաստանի և Ռուսաստանի հարավի հարաբերությունների կանոնավոր ընթացքի վրա բացասաբար ազդեց նաև Վրաստանի ու Ադրբեջանի որդեգրած հակառուսական, թշնամական վերաբերմունքը: Դա հանգեցրեց բրիտանացիների հակահայկական տրամադրությունների է՛լ ավելի խորացմանը: Բանն այն է, որ վրացիները դրսևորել էին գերմանասիրություն, իսկ ադրբեջանցիները՝ թուրքասիրություն: Լսելով, որ անգլիական զորքերը մտնում են Անդրկովկաս, վրացիներն ու ադրբեջանցիները երկյուղում են: «Շատերը վերջինների ղեկավարներից մինչև իսկ անգլիացիների գալուց առաջ կապկպել էին իրենց պայուսակները՝ Բագուից հեռանալու նպատակով»[47].- գրել է Ա. Աբեղյանը: Իսկ հայերը հանգիստ էին ու համոզված, որ կվայելեն անգլիացիների բարյացակամ վերաբերմունքը, քանի որ

---

[42] Նույն տեղում, ֆ.Պ-277, ց. 1, գ. 5, թ. 51:

[43] **Նասիպէան Ա.**, Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994, էջ 162:

[44] **Գալոյան Գ.**, նշված աշխ., էջ 54-55:

[45] *Революция и гражданская война в описаниях белогвардейцев, с. 92.*

[46] *Вопросы истории, 1993,* № *8, с. 100,* **Деникин А.**, *նշվ, աշխ., էջ 59:*

[47] Հայրենիք, Բոստոն, 1926, № 12 (48), էջ 86:

իրենք շոշափելի ավանդ էին մուծել Համաձայնության խմբավորման հաղթանակի մեջ: «Սակայն, երբ բրիտանական գրաւման բանակները Բագու ոտք դրին, յետոյ նաեւ Թիֆլիս ու Բաթում անցան, եւ երբ գերման զօրավարներին ու դիւանագետներին անգլիականներ փոխարինեցին, պարզուեց շուտով, որ սրանք բնաւ մի առանձին համակրանք չունէին հայերի հանդէպ եւ պատրաստ էլ չեն անգամ Հայաստանի ամենաարդար շահերը պաշտպանելու համար որեւէ գործնական աջակցութիւն ցոյց տալ նրան»[48]: Ավելին, հայերի շրջանում մեծ զարմանք էր տիրում, թե ինչպես «դաշնակից» անգլիացիները «գերմանասէր եւ տաճկասէր վրացիներին ու ադրբեջանցիներին փայփայում են եւ մեր երկրից (Հայաստանի Հանրապետությունից - Գ. Պ.) կտրում նրանց են տալիս»[49],- գրում է Ա. Բաբայլանը: 1918 թ. դեկտեմբերի 12-ին Բաքվի Հայոց ազգային խորհրդի նիստում գեներալ Ա. Բագրատունին նշեց, որ «Թոմսոնի բռնած կուրսը բոլորովին անընդունելի է հայերի համար: Չի կարող միատեսակ վերաբերմունք լինել դեպի Ազրբէյջանը, Վրաստանը և Հայաստանը, որովհետեւ հայերը մինչեւ վերջը դաշնակիցների օրիենտացիայի տեսակէտի վրայ են կանգնել»[50]: Նույն կարծիքին էր նաև Հ. Քաջազնունին. «Դարձեալ սխալւած էինք,- գրել է նա,- անգլիացիները չարին այդ տարբերութիւնը: Կարծես չըգիտէին կամ մոռացել էին, թէ մենք իրանց դաշնակիցներն ենք, իսկ վրացիների ու ազրբէյջանցիների հանդէպ ցոյց տուին այնպիսի մեծահոգութիւն, որ միանգամայն անսպասելի, մասամբ իսկ անհասկանալի էր մեզ համար[51]: Բանն այն է, որ մտնելով Անդրկովկաս, անգլիացիները նկատեցին, որ վրացիներն ու ադրբեջանցիները ունեն բացահայտ հակառուսական դիրքորոշում, իսկ հայերը կապ են պաշտպանում իրենց պոտենցիալ թշնամու՝ Ռուսաստանի հետ:

1918 թ. դեկտեմբերի 5-ին Թիֆլիսում տեղի ունեցավ Ա. Ջամալյանի և Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորիի հանդիպումը՝ երկու հանրապետությունների միջև գոյություն ունեցող տարաձայնությունները հարթելու նպատակով: Հանդիպման ժամանակ Ա. Ջամալյանն ուրվագծեց Կովկասի ապագա արտաքին քաղաքական հեռանկարների երեք հնարավորություններ՝ «ա.- Դենիկինը կյաղթի բոլշեւիկներին եւ կգայ տիրելու Անդրկովկասին, բ.- Բոլշեւիկները կյաղթեն Դենիկինին եւ կգան Անդրկովկասի վրայ, գ.- Անգլիացիք եւ դաշնակիցները կգրաւեն Անդրկովկասը եւ նրա ժողովուրդներին կթելադրեն իրենց կամքը հաշւի առնելով կամ հաշւի չառնելով նրանց ցանկութիւններն ու տրամադրութիւնները:

Արդ այս երեք դրութիւններից իւրաքանչիւրի հանդէպ ի՞նչ է Ձեր վերաբերմունքը. այս հարկաւոր է իմանալ, որպեսզի կարելի լինի – վրացական մերձեցման կամ գործակցութեան կոնկրետ խնդիրներին անցնել»[52],- հարցրեց Ա. Ջամալյանը:

---

[48] Նույն տեղում:
[49] **Բաբալեան Ա.**, նշված աշխ., էջ 33:
[50] ՀԱԱ, ֆ. Պ-223, ց. 1, գ. 113, թ. 15:
[51] **Քաջազնունի Հովհ.**, ՀՅԴ դաշնակցությունը անելիք չունի այլևս, էջ 33:
[52] ՀԱԱ, ֆ.Պ-200, ց. 1, գ. 66, թ. 135-136:

Ե. Գեգեչկորին պատասխանեց, որ իր կառավարության տեսակետը պարզ է. «Դենիկինը անընդունելի է ...այնպէս, ինչպէս և բոլշեւիկները. այդ երկուսի դէմ էլ ...պէտք է կռիւ մղենք»[53]: Այսպիսով Վրաստանը որդեգրել էր թե՛ խորհրդային և թե՛ ոչ խորհրդային Ռուսաստանի նկատմամբ բացահայտ թշնամական դիրքորոշում: *Վրաստանի կառավարությունը, շահարկելով անգլիացիների հակառուսական դիրքորոշումը և Հայաստանի կապերը Ռուսաստանի հարավի հետ, օգտագործեց դիվանագիտական հնարավոր բոլոր ձևերն ու միջոցները էլ ավելի սրելու ու խորացնելու բրիտանացիների հակահայկական տրամադրությունները*[54]: Գ. Կորգանովը 1919 թ. հունվարի 20-ին Ս. Տիգրանյանին ուղղված գաղտնի զեկուցագրում տեղեկացնում է, որ Վրաստանի կառավարությունն անգլիացիներին համոզում է, թե իբր «հայերի միակ երազանքը Ռուսաստանին վերամիավորվելն է»[55]: Մեկ այլ առիթով Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելության խորհրդական Միքայել Թումանովը 1919 թ. փետրվարի 9-ին արտաքին գործերի նախարարին ուղղված գաղտնի զեկուցագրում տեղեկացնում է. «վրացական շրջաններն աշխատում են անգլիացիներին համոզել, որ հայերը ցանկանում են ռուսների վերադարձը Կովկաս եւ անբաւական են անգլիական քաղաքականութիւնից»[56]: Հայերի մասին վրացիների տարածած լուրերն իրականությանը չէին համապատասխանում, և դժվար թե անգլիացիները դա չհասկանային: Պարզապես նրանց պետք էր, որ վրացիների հակահայկական տրամադրությունները ծավալվեն, և նրանց միջև թշնամությունը խորանա:

1919 թ. հունվարի սկզբին Բաքվում Մ. Պապաջանովի հետ հանդիպման ժամանակ Վ. Թոմսոնը խնդրեց Հայաստանի կառավարությանը հաղորդել, որ Ն. Ժորդանիան իրեն հայտնել է, թե «Հայերն իրենց զորամասերի հրամանատարությունը հանձնել են ռուս սպաներին: Հայոց բանակի սպաները միաժամանակ համարվում են նաև Կամավորական բանակի ծառայողներ (օրինակ՝ գնդապետ Զինկևիչը)»[57]: Վ. Թոմսոնին Ն. Ժորդանիայի հայտնածը նույնպես բամբասանք էր, բայց անգլիական զինվորական առաքելությունն այն օգտագործում էր իր հակահայկական գործելակերպի ուժեղացման, հայերին հարվածելու և նրանց դիրքերը թուլացնելու համար: Ահա թե ինչու բրիտանական զինվորական առաքելությունը ոչ միայն չէր օժանդակում հայկական բանակի ուժեղացմանը, այլև խանգարում էր անհրաժեշտ պարենով, հագուստեղենով, զենքով ու զինամթերքով և այլ անհրաժեշտ պարագաներով նրան ապահովելուն: Անգլիացիները, առանց հաշվի առնելու Հայաստանի կառավարության բողոքները, Կարսից անարգել դուրս էին բերում ռուսների թողած մեծ քանակությամբ զենք, զինամթերք, հանդերձանք, պարեն և այլ ապրանքներ: Այդ առիթով ապրիլի 30-ին Արևելքում անգլիական գլխավոր հրամա-

[53] Նույն տեղում, թ. 136:
[54] **Բաբալեան Ա.**, նշվ. աշխ., էջ 32:
[55] ՀԱԱ, ֆ.Պ-200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 35:
[56] Նույն տեղում, ց. 1, գ. 181, մաս I, թ. 35-36:
[57] Նույն տեղում, գ. 193, մաս I, թ. 78, թ. 101, ֆ. Պ-223, ց. 1, գ. 113, թ. 30:

նատար գեներալ Գ. Միլնի հետ հանդիպման ժամանակ Ալ. Խատիսյանն արտահայտեց իր վրդովմունքը և խնդրեց դադարեցնել զինամթերքի դուրսբերումը Կարսից: Հանդիպման վերջում Գ. Միլնը Ալ. Խատիսյանին հայտնեց, թե իբր իրեն հայտնի է, որ «հայերը ձգտում են միանալ Դենիկինին»[58]: 1919 թ. մայիսի 10-ին դարձյալ Ա. Ահարոնյանին ուղղված նամակ-հրահանգում Ալ.Խատիսյանը գրում է. «Անգլիացիք Կարսից տարել են 60 (եթէ ոչ աւելի) դաշտային թնդանօթներ, փամփուշտներ ...Մեր կրկնակի դիմումները այդ առիթով մնացին անհետեւանք»[59]: Այսպիսով, բրիտանական զինվորական առաքելությունը վարում էր բացահայտ հակահայկական քաղաքականություն: Գործը հասավ նրան, որ անգլիացիք ամեն կերպ արգելակում էին հայկական պատվիրակության մեկնումը Փարիզ՝ գտնելով, որ նրա անդամներն ունեն ռուսական կողմնորոշում և կապի մեջ են Կամավորական բանակի հետ: Հայաստանի կառավարությանը հայտնի չէր Եվրոպա մեկնող հայկական պատվիրակության մուտքի արտոնության ձգձգման շարժառիթները, և իշխանական շրջանակներում դրա շուրջ ձևավորվել էին տարակարծություններ: 1919 թ. հունվարի 13-ին Ա. Ահարոնյանին ուղղված նամակ-հրահանգում Ս. Տիգրանյանը գրում է. «Ինչու մինչև այժմ մնացել ենք Թիֆլիսում, արդյոք հնար չեղավ Եվրոպա անցնելու և ինչու: Այստեղ ամենքը շատ անհանգիստ են այդ հապաղման պատճառով և դժգոհում են, մանավանդ երբ լսում են, որ պատվիրակությունների ընտանեկան հանգամանքներն են արգելառիթ լինում»[60]: Սակայն Ա. Ահարոնյանը դեռ հունվարի 8-ին Թիֆլիսից Ս. Տիգրանյանին ուղղված գաղտնի նամակում* տեղեկացրել էր, որ «Տարաբախտաբար հայ-վրացական անակնկալ ռազմադեպը արգելք եղավ մեր պատվիրակության ժամ առաջ մեկնելուն: Անգլիական զին. միսիոնի գլխավոր գեներալ Ռայկրոֆտը հասնելուն պես նախ բերանացի, ապա գրավոր հաղորդեց ինձ, մինչև հայ-վրացական ռազմադեպը չհարթվի նա չի կարող թույլ տալ ոչ հայ և ոչ վրացի պատվիրակություններին Եվրոպա մեկնել: Հունվարի 4-ին միայն Ուոքերը հայտնեց, որ մեր պատվիրակությունը կարող է մեկնել»[61]: Ա. Ահարոնյանն իր քարտուղար Ա. Միրզայանի և գյուղատնտես Հ. Փիրուզյանի հետ հունվարի 9-ին Թիֆլիսից մեկնեց և փետրվարի 4-ին Փարիզում էր[62]: Մինչև Եվրոպա մեկնելու մուտքի արտոնության թույլտվություն ստանալը Մ. Պապաջանովը հունվարի 3-ին Ա. Ահարոնյանի համաձայնությամբ ընտանեկան խնդրով մեկնեց Բաքու, իսկ նույն ամսի 27-ին վերադարձավ Թիֆլիս՝ գեներալ Գ. Կորգանովի հետ Փարիզ մեկնելու նպատակով[63]: Սակայն բրիտանական զինվորական առաքելությունը դարձյալ միտումնավոր ձգձգեց Մ. Պապաջանովի, Գ. Կորգանովի, Հովհ. Քաջազնունու և Ս.

---

[58] Նույն տեղում, ֆ.Պ-199, ց. 1, գ. 32, թ. 150, ֆ. Պ-276, ց. 1, գ. 101, թ. 49:

[59] Նույն տեղում, ֆ.Պ-200, ց. 1, գ. 193, II մաս, թ. 296, ց. 2, գ. 52, թ. 3-4:

[60] ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, № 4063, ՀԱԱ, ֆ.Պ-200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 27, ց. 2, գ. 65, թ. 4:

* Ս. Տիգրանյանը նամակը ստացել էր ուշացումով՝ հունվարի կեսերին:

[61] ՀԱԱ, ֆ.Պ-200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 29:

[62] Նույն տեղում, թ.29, 75, 89:

[63] Նույն տեղում, թ.29, 75, 89:

Վրացյանի մուտքի թույլտվությունը Եվրոպա և Ամերիկա Ս. Վրացյանը ստիպված էր թողնել Թիֆլիսը և վերադառնալ Երևան, որովհետև նրան անգլիացիներն արգելել էին Եվրոպա մեկնել: Անգլիական զինվորական առաքելությանը հայտնի էր, որ նա 1918 թ. ամռանը գտնվել էր Ռուսաստանի հարավում և կապերի մեջ էր եղել Կամավորական բանակի և նրա գլխավոր հրամանատար գեներալ Մ. Ալեքսեևի հետ[64]: Ա. Ահարոնյանը արտաքին գործերի նախարարին ուղղված նույն նամակում գրում է. «Կրկնակի հեռագրով խնդրել եմ կառավարությանը թույլ տալ պատվիրակության մեջ առնել որպես զինվորական խորհրդական գեներալ Կորգանովին, տակավին պատասխան չունեմ. վերստին խնդրում եմ չմերժել ինձ: Նրա անելիքը, որպես հմուտ ու բարեխիղճ խորհրդական Եվրոպայում, ես համարում եմ անգնահատելի: Նորից խնդրում եմ կառավարությանը՝ թույլ տալ գեներալին ընկերանալ պատվիրակությանը[65]: Հայաստանի Հանրապետության վարչապետի և արտաքին գործերի նախարարի կողմից Գ.Կորգանովին հունվարի կեսին հավատարմագիր էր տրված «դաշնակից բանակների գլխավոր հրամանատարության մոտ Հայաստանի ընդհանուր դրության մասին բանակցություններ վարելու»[66]:

Եվրոպական պատվիրակության ռուսաստանյան առաքելության նախկին անդամ Մ. Արզումանովը 1919 թ. մարտի 22-ին Երևանում արտաքին գործերի նախարարին ուղղված զեկուցագրում տեղեկացնում է, որ Մ. Պապաջանովին և Գ. Կորգանովին անգլիացիները չեն թողնում Փարիզ մեկնել, քանի որ նրանց կասկածում են ռուսական կողմնորոշման մեջ[67]: Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարության շտաբի հետախուզական բաժնի 1919 թ. մարտի 26-ի ամփոփագրում ասված է. «Անգլիացիները պատգամավորներին (հայ - Գ. Պ.) Կովկասից դուրս գալու խոչընդոտներ են ստեղծում, հատկապես Փարիզ մեկնող այն անձանց նկատմամբ, որոնք Ռուսաստանի կողմնակիցներ են կամ կապի մեջ են Կամավորական բանակի հետ: Պատգամավորներից մեկին (Կորգանով) թույլ չեն տալիս Եվրոպա մեկնելու միայն այն բանի համար, որ կասկածում են, որ նա շփումների մեջ է Կամավորական բանակի հետ»[68]: Անգլիական զինվորական առաքելությունը խոչընդոտում էր նաև Հովհ. Քաջազնունու ուղևորությունն Ամերիկա[69]: Փարիզից Ա. Ահարոնյանը խորը վրդովմունք արտահայտեց Համաձայնության երկրների՝ մասնավորապես Մեծ Բրիտանիայի վարած հակահայկական քաղաքականության կապակցությամբ:

Ինչպես տեսնում ենք, փաստերը վկայում են, որ բրիտանական զինվորական առաքելության հակահայկական քաղաքականությունը կրում էր շարունակական բնույթ: Կարծելով, որ Հայաստանը և նրա պատվիրակները կապի մեջ են

---

[64] Նույն տեղում, ֆ.Պ-223, ց. 1, գ. 113, թ.21, **Վրացյան Ս.**, Հին թղթեր նոր պատմության համար, Բեյրութ, 1962, էջ 280:

[65] Նույն տեղում, ֆ.Պ-200, ց. 1, գ. 193, մաս I, թ.29:

[66] Նույն տեղում, թ. 18[a]:

[67] Նույն տեղում, ֆ.Կ-4033, ց. 2, գ. 963, թ. 86:

[68] *РГВА, ф. 39540, оп. 1, д. 44, л. 19.*

[69] ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 2, գ. 963, թ. 86, 97, ֆ. Պ-200, ց. 1, գ. 158, թ. 94:

Ռուսաստանի հարավի հետ՝ միտումնավոր ձգձգում էին նրանց՝ Եվրոպա և Ամերիկա մուտքի թույլտվությունը:

ВНЕШНЕПОЛИТИЧЕСКАЯ ОРИЕНТАЦИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ОТНОШЕНИЯ С НЕСОВЕТСКИМИ ГОСУДАРСТВЕННЫМИ ОБРАЗОВАНИЯМИ ЮГА РОССИИ

(декабрь 1918г. – первые месяцы 1919г).

ПЕТРОСЯН Г.А.

Резюме

Нововыявленные архивные материалы и документы освещают отношения между Республикой Армения и несоветскими государственными образованиями Юга России после первой мировой войны.

Противоречия, существующие в отношениях Великобританиии и отражающиеся на Закавказском регионе, в том числе и на Армении, порождали весьма сложную политическую ситуацию, характеризующуюся непризнанием со стороны Великобритании дружественных отношений между несоветскими государственными образованиями Юга России и Армении. Антиармянская политика военной миссии Великобритании имела продолжительный характер. Великобритания умышленно затягивала поездку армянской делегации в Европу и Америку.